

աւանդուրիւնը, այլ նաեւ կառավարական օրէնքը: Այդպիսի բան չէ պատահած երբեք: Ասկեց առաջ Միաբանական Ընդհանուր Ժողովով որոշուած էր ծախսու հանել միայն հանգուցեալ Միաբաններու անձնական իրերը, ժամացոյց, եւայլն, ինչպէս եւ Նախապէս գնուած ոսկեղէն առարկայ մը, որոնք ո՛չ արուեստի եւ ո՛չ հնագիտական ճեպակեցով մեծ արժէք չեն ներկայացներ. բայց այդ որոշումն ալ գրեթէ չէ գործադրուած, պերճանքի վերաբերեալ իրեկիմաց գիներուն անկման պատճառաւ:

Խօսքը չենք ուզեր ընել հայդիայից այն վերագումներուն, որոնցմով թուցիկին հեղինակները անխօրհէ կը պարտաւեն վանական վարչութեան ամենեւ յարգելի դէմքերն ու պատճենները, ինչպէս եւ իրենց անգնահատելի անձնութիւններով Ս. Արքուդոս բանկազին ծառայութիւն մատուցած երկու աշխատակազմի անձնաւորութիւններ, որոնց յարգանք միայն կը պարտինք ազգովին:

Միայն այս արտայայտութեանց ձեւն ու ոգին արդէն պիտի կարենաւ հասկնցնել քէ ի՛նչպիսի եկեղեցիներէ սեւ մարդիկ կը թափին շատագրուած այդ զգալարեալուն մութին մէջ, եւ քէ լրագրական ուղղափառութեան համաձայն էր զբաղիլ անով եւ խմբագրական ընդլայնումներու հիւր հանել անկէ:

Հաստատութեան ներքին կեանքին հարազատ պատկեր, իր կրօնական, իմացական, ելմանական, մատակարարական, շինուածական եւայլն գիծերուն վրայ կազմուած, այն է միայն՝ զոր Նորին Ամենապատանօտիւն Մերազմ Պատրիարք Հայրը ամեն ճարձի անհետկան վերամուտի առթիւ կ'արտասանէ Միաբանական Ընդհանուր Ժողովոյ առջեւ, եւ որ յետոյ միշտ կը հրատարակուի «ՍԻՈՆ» Պատճենաթերթին մէջ:

Կը փափաքեմք որ մեր Սիրելի եւ Պատուարժան Ժողովուրդը չհաւատայ ասկեց ծաբբեր ճեղքելութեանց, եւ չստուի մանաւանդ թեմամական ոգւով ճարձայնութեան լուրերէ:

Ի ԴԻՄԱՅ ՏՆՈՐԷՆ ԺՈՂՈՎՈՑ

ՎԱՍԷ ԱՅՏԵՆՊԵՏ

ՊԱՏՐԻԱՐԿԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ

ԱՍՏԵՆՊԵՏԻ ՎՐԻ. ԱՐԱՎԱՄԱՆԱՆ

ՄԵԼԻՏԻՑ ԵՊՍ. ԱՂԱՆՆՈՒՆԻՑ

14 Օգոստոս 1935

Ս. ՅԱՎՈՐԻ ՆԵՐՍԷՆ

ԱՄՍՈՐԷԱՅ ԼՈՒՐԻՆԸ

Անցեալ Օգոստոս ամսուան ընթացքին, Ս. Աթոռոյ Յնօրէն Ժողովը տասը անգամներ ի նիստ գումարուեցաւ իրիւ վարչական Մարմին, եւրօն. Գիւր. Ասեմանը երեք անգամ, իսկ Ուսում. Խորհուրդը մէկ անգամ, իւրաքանչիւրը զարգելով իր իրաւապահութեան մէջ եղած խնդիրներով:

● ԵՂ. 1 Օգոստոս. — Յրանչիփեան Միաբանութեան առաջնորդներէն Հ. Պրեկուրօրը, վարչականութեան ընկերակցութեամբ, յանուն իրենց Մեծաւորին այցելեց Ս. Պատրիարք Հօր, Ս. Յաւորէան Տաճարի վերաբերեալ հարցի մը մասին տեսակցութեան մը համար:

● Ուր. Եր. Կիր. 2—4 Օգոստոս. — Վարդապետի տեսնախմբութեան և այդ առթիւ կատարուած ձեռնադրութեան վերաբերութեամբ տեսնել «Սիոնի» այս թիւին էջ 288ի գրութիւնը:

● ԲՂ. 5 Օգոստոս. — Ս. Պատրիարքը մատուցուեցաւ Ս. Փրկչի գումարի բացօթեայ սեղանին առջեւ. եւ յետոյ կատարուեցաւ հոգեհանգիստ՝ պատրիարքաց, միաբանի և հասարակաց գեղեցկամեղայրներուն մէջ:

● ԴՂ. 7 Օգոստոս. — Տ. Նորայր լրդ. յեղեցաւ Հայկ. Ժողովոյ մօտ՝ արձակուրդի. Տ. Տիւրան լրդ. Նազարէթ, Ժառանգաւորաց արձակուրդի տեղ փնտռելու:

● ԵՂ. 8 Օգոստոս. — Ս. Պատրիարքը, ընկերակցութեամբ Տ. Մեմուր Սրբազանի, Տ. Սիոն, Տ. Հայկազուն, Տ. Սեդրիթ, Տ. Տիւրայր վարդապետաց, Գ. Նաւրեանի և հարտաբապետին, Յուպէ իշաւ, Նշեղիւս համար գերեզմանատան մէջ այն տեղը, որ այս տարի պիտի սկսուի շինութիւնը ազգ. զարատան գիտնայրակին:

● Ուր. 9 Օգոստոս. — Տ. Յուսէփ արեղայ մեկնեցաւ Եգիպտոս, Աթէնք երթալու համար, այցելութեան՝ իր հիւանդ եղբոր:

— Տ. Տիւրան լրդ. և Ժառանգաւորք մեկնեցան Նազարէթ:

● Եր. 10 Օգոստոս. — Տ. Պարոյր Արեղայ, ընկերակցութեամբ Անգլիանի Սարգիսապի Անդրյորդանան մեկնեցաւ, Ամմանի և Ռեռէյֆայի ազգայնաց հոգեւոր այցելութեամբ:

— Հոգեւորք Տ. Եսայի պատրիարքի դամբարանի անդին վերսի որմին մէջ գործուեցաւ այսօր յախնայական հայկական մեծ խաչազարդ մը, նման անոր որ ասկեց առաջ աղուցուած էր Հոգեւորք Տ. Նիկիւն պատրիարքի դամբարանին վերին:

● Վիր. 11 Օգոստ. — Ս. Պատարագն ի Ս. Յարութիւնի ֆարգեցեց Տ. Տիրայր Վրդ. բնարանէն էր ՎՄատիք առ Տէր. և առէք զլոյս, և երեսք ձեր մի ամաշեցեցին (Սատմ. Լ. Գ. 5), ընդհ. ինաստե՛ն էր հետեւեալը. երկու տեսակ յոյս կայ, յաւթական եւ հոգեղան, մին՝ բնութիւնը սոսաւնելի կ'ընէ մեր մարմնաւոր աշքերուն, միւսով կը թափանցենք մեր ներքին կեանքի խորունկեանց մէջ, հասկնալու համար անոր զգաւանքը, այսինքն մեր գոյութեան խորհուրդը: Վերջին այդ յոյսին ապրելուն է Քրիստոնէական կրօնի պայցուսը որ անմահութեան հաւատքը մէջն կը պայծառացնէ ներքին մարդը: Քրիստոնէական յոյսէն արտաշայ ապրուած կեանքը խաւարային է ու աննշտապէ: Պէտք է Տիրանալ այդ յոյսին՝ զոյր ըլլալու համար ոչնչութեան մութին:

● Բշ. 12 Օգոստ. — Կէս օրէ վերջ, Ս. Պատարարք Հայրը Պարոն-Տէրի հովիցին մէջ թէյ-յառեղանի պատիւ մ'ընծայեց ամերիկեան ընդհ. հիւպատոսին, երկու հիւպատոսներուն եւ փոխ հիւպատոսին: Միասին էին Տ. Կիրակի, Տ. Սեբորժէ և Տ. Շաւարշ վարդապետները:

— Տ. Գարեգին Վրդ. Հայֆայէն հասաւ:

● Գշ. 13 Օգոստ. — Ս. Պատարարքը, ընկերակցութեամբ Տ. Մեհրոպ Սրբազանի և Տ. Պարոյր վարդապետի, այցելեց Քրտնիսկիանց վանքի տղարանը, երկաթագործարանը, կահագործարանը, խոհանոցը, անղանառունը, շտեմարանը, մասանը, աղօթիքը, զապալաք մը կաղմբուս համար մատակարարական ներքին կարգուկանոնի մասին:

● Դշ. 14 Օգոստ. — Ուսուցիչ Պ. Շահան Պէրեքեբեան արձակուրդով մեկնեցաւ Եգիպտոս և հաւաւորաբար նաև Պոչկարիա: — Տ. Տիրան Վրդ. հեղաւ նազարէի մէջ:

● Եշ. 15 Օգոստ. — Տ. Զգոն Վրդ. մեկնեցաւ նազարէի մէջ. անէջ պիտի անցնի Լիբանան, օդափոխութեան համար:

● Ուր. 16 Օգոստ. — Տ. Տիրան վրդ. առժամային տեսիլ պաշտօնով մեկնեցաւ Հայֆա:

— Անլիլեբան Եպիսկոպոսը Անգլիա մեկնուսին առթիւ այցելեց Ս. Պատարարք Հոր:

● Կիր. 18 Օգոստ. — Մայր Տաճարին մէջ քաւրդեց Հ. Ասողիկ, օրուան Աւետարանէն բնարան առնելով ըթողեալ լիցին ճիզ մեղք քոս, բացառելով շնացալ թէ ընդհանրապէս ամէն ֆիզիկական տկարութեան ներքեւ բարոյական թեւութիւն մը կը ծածկուի իբրեւ պատճառ. յաւաքնեթականէն և երբեմն ուրիշներէն գործուած:

— Ս. պատարարգէն վերջ կատարուեցաւ խաղողի օրհնութիւն:

● Բշ. 19 Օգոստ. — Տէր Եղիշէ վրդ. մեկնեցաւ, իբր առժամաբար փոխ տեսուչ Ժառանգաւորաց, ի տեղի Տ. Զգոն վարդապետի, որ այսօր կը մեկնի նազարէի մէջ:

● Դշ. 21 Օգոստ. — Կանոնիկոս Պրիմէն եւ Պէյրուսի կրօն. վարժարանի ուսուցչներէն Պ. Միխայիլեան և իր տիկինը այցելեցին Ս. Պատարարք Հոր:

● Ուր. 23 Օգոստ. — Տ. Գարեգին վրդ. դարձաւ Հայֆայէ:

● Եւր. 24 Օգոստ. — Տ. Շաւարշ Վրդ. Յոպպէ:

մեկնեցաւ վերափոխման տօնին առթիւ պատարագելու և քարոզելու: — Վաղուան վերափոխման տօնին առթիւ, դարձան նազարէի մէջ արձակուրդի քաջած ժառանգաւորները, առաջ-նորոգութեամբ Տ. Եղիշէ վարդապետի:

— Ս. Պատարարք Հոր նախագահութեամբ, երեկոյին, ամբողջ Միաբնակութեան Դեմոստրանի, Ս. Կուսին գերեզմանը մուտք գործեց ճշգրտափառեով:

● Կիր. 25 Օգոստ. — Աստուածամոր գերեզմանին վրայ Ս. պատարագ. մատոյց Տ. Մկրտիչ Սրբազան Աղաւնուռնի, և քարոզեց, պանծացնելով Ս. Կուսին անմին վրայ տիպար մօր աստուածային պատկերը: Սաստիկ տաքէն եւ ճշնշուած օգին պատճառաւ, Սրբազան ֆիլիքական նեղութիւն զգալով՝ երոխայից պատարագին աւարտման հետք, Տ. Ասողիկ վրդ. շաւուսեց Ս. պատարագը:

— Հայֆայի հայ երիտասարդներու նուագախումբը Ս. պատարագին առաջ և հետքը աղ-գային կտորներ նուագեց Դեմոստրանի մեր սեփական պարտեղին մէջ:

● Բշ. 26 Օգոստ. — Վերափոխման Մեծիցնի տօնին առթիւ Ս. պատարագը մատուցուեցաւ ի Ս. Փրիլիչ, ուր Տ. Կիրակի Վրդ. քարոզեց ճիշտաւ Քրիստոս խափանեաց դման և լուսաւորաբար զկեսն և զանեղութիւնն բնարանով, և բացառեց թէ անմահութեան, որ ճշմարիտ կեանքն է, բնագործ միայն ունէին հին կրօնները. Աւետարանն է որ այդ զգայութեամբ վերածեց պայծառ հաւատքի, զայն ընդունելով քրիստոնէական հաւատքի ամենէն կարեւոր սկզբունքներէն մին:

— Տ. Եղիշէ վրդ. ժառանգաւորաց երկրորդ խումբը արձակուրդէն զէպի նազարէի մէջ:

● Դշ. 27 Օգոստ. — Տ. Սիւն Վրդ. մեկնեցաւ Աթէնք, Լուսթրաքի մէջ ջրարուծեց ընելու համար: — Տ. Շաւարշ Վրդ. կարգուկանոն հոգեւոր հովիւ Հայֆայի հայ զաւուսթին Ասպրթարձման Տ. Հայրիկ Վրդ. ի յանձնուեցաւ նաև Տպարարք Տեօֆոսթիւնը:

● Դշ. 28 Օգոստ. — Հ. Սերոփէ մեկնեցաւ նազարէի, առժամաբար հակուռ համար ժառանգաւոր ասներու վրայ, ի տեղի Տ. Եղիշէ Վրդ. ի որ պիտի վերադառնայ:

● Եշ. 29 Օգոստ. — Նորընծայ Տ. Շնորհաւորեղայ ի տնդրանիկ Ս. պատարագը մատոյց Մայր Տաճարին մէջ:

— Տ. Գարեգին Վրդ. մեկնեցաւ Հայէպ:

● Ուր. 30 Օգոստ. — Նորընծայ Տ. Արթուր արեղայ մատոյց իր տնդրանիկ Ս. Պատարագը Մայր Տաճարին մէջ:

ԱՌ ՈՐ ԱՆԿ Է

Առ Բազմակէպ պատասխանը Տ. Տիրան Վարդապետի՝ պիտի հրատարակուի «Սիւն» լաւագործ թիւի մէջ: Ներկայ թիւը թալարուած եւ՝ երբ ստացանք այդ պատասխանը Հայֆայի, ուր պատշոնի հոծ զբաղումներով առժամակապ կը գտնուի զայն գրողը: